

1.4. Աշխատանքի շուկայի ցուցանիշներ

1.4.1.Ջրադվածություն

Տնտեսապես ակտիվ բնակչության միջին թվաքանակը 2003թ. հունվարին հանրապետությունում, ըստ գնահատման, կազմել է 1403.3 հազ. մարդ, որի 90.9%-ը կամ 1276.0 հազ. մարդ զբաղված են եղել տնտեսության մեջ, իսկ 9.1%-ը կամ 127.3 հազար մարդ (միջինը ժամանակաշրջանի համար) չեն ունեցել աշխատանք, գրանցվել են ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալությունում և ստացել գործազուրկի կարգավիճակ:

2003թ. հունվարի վերջի դրությամբ ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալությունում հաշվառման կանգնած 154.1 հազ. աշխատանք փնտրողներից 99.0%-ը կամ 152.6 հազարը եղել են չգբաղվածներ: Գործազուրկի կարգավիճակ ստացել են չգբաղվածների 83.4%-ը կամ 127.3 հազ. մարդ:

2003թ. հունվարին գործակալության կողմից հաշվառման վերցված 1.8 հազ. չգբաղվածներից 1.4 հազարը կամ 77.8%-ը ստացել են գործազուրկի կարգավիճակ: Նույն ժամանակամիջոցում հաշվառումից հանվել է 1.7 հազ. մարդ, նրանցից 30.8%-ը՝ աշխատանքի տեղավորման պատճառով:

Աշխատուժի առաջարկն ըստ հանրապետության մարզերի 2003թ. հունվարին¹

	Աշխատանք փնտրողների թվաքանակը		Նրանցից գործազուրկներ	
	ընդամենը, հազ. մարդ	%-ով՝ նախորդ տարվա հունվարի նկատմամբ	ընդամենը, հազ. մարդ	%-ով՝ նախորդ տարվա հունվարի նկատմամբ
Ընդամենը	154.1	95.2	127.3	92.6
ք.երևան	37.2	87.9	33.7	86.6
Արագածոտն	2.2	100.0	1.4	93.3
Արարատ	6.3	84.0	5.0	83.3
Արմավիր	8.4	95.5	5.9	90.8
Գեղարքունիք	8.7	97.8	6.3	98.4
Լոռի	25.9	104.4	21.5	101.9
Կոտայք	9.3	85.3	7.0	81.4
Շիրակ	32.5	97.0	27.4	94.2
Սյունիք	16.7	102.5	13.9	101.5
Վայոց ձոր	2.1	105.0	1.7	100.0
Տավուշ	4.8	104.3	3.5	87.5

Կանայք կազմել են պաշտոնապես գրանցված գործազուրկների 67.3%-ը: Նրանց տեսակարար կշիռը գործազուրկների ընդհանուր թվաքանակում 2002թ. հունվարի նկատմամբ աճել է 1.3%-ով: Աշխատուժի պաշտոնապես հայտարարված պահանջարկը 2003թ. հունվարի վերջին կազմել է 788 մարդ, այդ թվում՝ 75.5%-ը կամ 595-ը՝ բանվորական մասնագիտությունների նկատմամբ: 2003թ. հունվարին ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալության միջնորդությամբ աշխատանքի տեղավորվել են 512 մարդ, որոնց 52.9%-ը՝ կանայք: Մեկ թափուր աշխատատեղի ծանրաբեռնվածությունը կազմել է 194 չգբաղված մարդ:

Հանրապետությունում նպաստառու գործազուրկների թվաքանակը 2003թ. հունվարին կազմել է 5.8 հազ. մարդ, իսկ գործազրկության նպաստի միջին չափը՝ 3279 դրամ: Նույն ամսում դրամական օգնություն ստացել են 7.3 հազ. գործազուրկ: Դրամական օգնության միջին չափը կազմել է 1472 դրամ:

Գործազրկության մակարդակը, հաշվարկված որպես զբաղվածության տարածքային կենտրոններում պաշտոնապես գրանցված գործազուրկների և տնտեսապես ակտիվ բնակչության (զբաղվածներ և գործազուրկներ) հարաբերակցություն, 2003թ. հունվարին

¹ ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալության տվյալներով:

կազմել է 9.1% և 2002թ. հունվարի համեմատությամբ նվազել է 0.6 տոկոսային կետով, իսկ 2002թ. դեկտեմբերի նկատմամբ մնացել է նույն մակարդակին: